ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2023-1-2-Ա

ք. Երևան 12.01.2023թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2023 թվականի հունվարի 12-ի նիստում քննարկեց 2022 թվականի դեկտեմբերի 14-ին արտոնագրային հավատարմատար Զարուհի Մանուկյանի կողմից ներկայացված Société des Produits Nestlé S.A. ընկերության (CH-1800 Vevey, CH) «NESTLE» (IR996027) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 93-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ծառայության բնույթի վերաբերյալ հարցերում: Տվյալ դեպքում հայտարկված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման, քանի որ այն ներառում է «мороженое» (թարգմանաբար՝ պաղպաղակ) գրառումը, որը հանդիսանում է կոնկրետ ապրանքի տեսակ: Այն զովացուցիչ աղանդերային սննդամթերք է, որի հիմնական հումքը կաթնամթերքն է, մասնավորապես՝ կաթը, սերուցքը և կարագը, հետևաբար, հայտում նշված մնացած բոլոր ապրանքներն չեն համապատասխանում վերոնշյալ գրառմանը, որոնք էլ սպառողին մոլորության մեջ կգցեն ապրանքների տեսակի վերաբերյալ հարցերում:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը բավարարելու, փորձաքննության որոշումը չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանին իրավական պահպանություն տալու մասին, քանի որ միջազգային ծանուցման մեջ նշված են այնպիսի ապրանքներ, որոնք կարող են համարվել պաղպաղակ և ապրանքային նշանի գրանցումը դրանց համար սպառողին չի կարող մոլորության մեջ գցել ապրանքների բնույթի վերաբերյալ հարցում: Բողոքարկման խորհրդի անդամները ևս նույն կարծիքը հայտնեցին բողոքի վերաբերյալ:

Բողոքարկողը համաձայն էր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ

Փորձաքննության բաժնի պետը նույնպես համաձայնվեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 70-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտոնագրային հավատարմատար Զարուհի Մանուկյանի կողմից ներկայացված Société des Produits Nestlé S.A. ընկերության «NESTLE» (IR996027) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը բավարարել, փորձաքննության որոշումը չեղյալ ճանաչել՝ «мороженое» բառին իրավական պահպանություն չտրամադրելով:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ